534. ՏԱՊԱՆԱՔԱՐ. Նախորդի մոտ, 2 տող.



ԱՒԵՏԻՍ ՔԱՀԱՆԱ:
ԹՎԻՆ] ՈՒՏԷ (1198):

535. ԽԱՉՔԱՐԻ ԲԵԿՈՐ. գյուղից հարավ-արևելք, «Կարծախ» գյուղատեղիում, գեղագիր խոշոր տառերով, 3 տող.



.....
[ՅԻՇ]ԵՑԷՔ Ի
ՔՍ:

536. ԽԱՉՔԱՐԻ ԲԵԿՈՐ. Նույն տեղում, թիկունքին, 2 տող.

...ՅԻՇԵՑԷՔ ...ՐԴ
Ս ...ԹՎԻՆ Ջ...
ՀՊՎԱ

ՃՈՃԿԱՆ

Տարածքի հնագիտական հուշարձանները, բնակավայրի ավերակները, քառակող կոթողների բեկորները վկայում են նրա ժամանակագրական ընդգրկումների մասին:

Գյուղի հարավային կողմում մնում է երկու մուտքով միանավ սրահավոր Ս. Աստվածածին եկեղեցին, որի ծածկը նստում է հանդիպակաց երեք գույգ որմնամույթերը իրար կապող կամարների վրա: Կարևորվում է «Աղեգի» մատուռ-սրբատեղին. խաչքարերով գերեզմանոցը և 3-4 կմ արևմուտք գտնվող վանական երկու համալիրները:

Շփրթնավանք. Ավերակները գտնվում են գյուղից 4 կմ արևմուտք, ճոճկան գետակի ձախակողմյան անտառի եզրում: Կոպտաքարով շարված են գլխավոր՝ թաղակապ եկեղեցին և կից մատուռները, որոնց աղյուսաշար թաղերը, պատերի վերին մասերը փլված են: Վանքի պատերին, թափված սվաղի մնացորդների, խաչքարերի ու տապանաքարերի վրա հիշատակագրություններ չեն նկատվել:

Նահատակի վանք. Գտնվում է Շփրթնավանքից (նաև՝ Չփրթնավանք) 1,5 կմ հարավ-արևմուտք, նույն գետի աջափնյա դարավանդի վրա, անտառի բացատում: Գլխավոր ու երկրորդական եկեղեցիները նույնպես թաղակապ են՝ շարված ճեղքած քարով ու կրաշաղախով: Վերջինիս վրա եղել է զանգակատուն, որն այժմ փլվել է: Հուշարձանախումբը հիմնականում կանգուն է՝ շրջապատված կիսավեր պարսպով: Տարածքում կան բուսական, երկրաչափական և կենդանական քանդակներով խաչքարեր՝ զուրկ գրավոր հիշատակությունից:

Վանքից մի փոքր հարավ, պարսպից դուրս կա մի փոքր մատուռ՝ ներսում որմնախաչ, որի քանդակներից աչքի են ընկնում թռչնագլուխ-սֆինքսամարմին քանդակները:

Որմնախաչը ևս հիշատակագրություն չունի և բնորոշ է ԺԷ դարին: Կրում է սուրբ Նահատակ անունը: Վերջին դարերում ճոճկանը եղել է ազնվական Լորիս-Մելիքյանների կալվածքը, որոնք որոշ բարեփոխություններ են արել գյուղում: